

Ա. Աֆինոզեան

Լիզա Մորոկիւնա



891.71
Լ
Ա-99

17 JUL 2006


891-71
Ա-99

Պրովետարներ բոլոր յերկրներէ Երեւանի
28.7.2006

Ս. ԱՅԻՆՈՐԳԵՆՈՎ

ԼԻԶԱ ՍՈՐՈԿԻՆԱ

Ազատ Թարգմ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ



ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1934



61217-67

Отв. ред. А. Г. Яваков

Сдан набор 26 VII-1934 г.
 Издан. 467/4045
 Стагформат Б5 125x175
 Уполкрайлит № А-244

Тех. ред. О. Тер-Давыдов

Подписано в печ. 14 IX 1934 г.
 Объем 1 печ. листа
 Заказ 4441
 Тираж 1500 экз.

Типография им. „Стачки 1902 года“ АЧПТ в г. Ростове на Дону



Ա.Լ.ԲՍԱՆՆԻՐ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ ԱՅԻՆՈԳԵՆՈՎԸ հայտնի դա-
 մասուրգ է, վաղի բազմաթիվ պիեսաները բեռադրվում են խոր-
 հրդային բասուններում:

Առանձին համբավ են ձեռք բերել նրա վերջին «ՏԱՐՈՐԻ-
 ՆԱԿ ՄԱՐԿ» յեկ «Ա.Հ» պիեսները, վարանք ցույց են տալիս նին
 ինտելիգենցիայի ուղիները՝ բանվոր դասակարգի կողմից սո-
 ցիալիսական շինարարության համար մղվող պայքարի կա-
 պակցությունը:

«Լ.ԻՉՍ, ՍՈՐՈՎԻՆՍ» պատմավեպի հեղինակը գրել է Բայրիկ:
 Ապիսակծության ջրանցքի շինարարությունն այցելելուց հետո
 Պատմավեպի համար նիսք են ծառայել իրական վաստերն ու
 կենդանի մարդկանց գործերը:

Յեկան Լիզային տանելու:

Ի՞նչ: Յես ի՞նչ եմ արել, վոր ինձ ուզում եք
բանտ նստեցնել: Ավագակուհի՛ր յեմ: Բայց այդ բանն
անգամ չեմ լսել: Ոգնել եմ մարդո՞ւս: Այո՛, վորպես
նրա կինը: Իբրև մասնակից: Իհարկե, կինը մարդուն
ոգնում է, յեթե նրան սիրում է: Յես վաճառում
եյի այն իրերը, վոր մարդս բերում էր, իսկ թե վո՞ր-
տեղից եր բերում, յես չեյի հետաքրքրվում: Այո՛,
նրա հետ մի-յերկու անգամ զնացել եյի «վորսի»,
գիշերը ճանապարհին կանգնեցրինք մի սայլ, բայց
չե՞ վոր մենք միայն ուզում եյինք հարցնել վոր
ժամն է, իսկ նրանք վախեցան և սկսեցին կրակել,
դե պարզ է, վոր մենք ել սկսեցինք պաշտպանվել:
Իսկ հետո Սեմյոնը ձին ու սայլը քշեց տարավ, բայց
թե վո՞րտեղ, չգիտեմ, չեմ հետաքրքրվել...»

Լիզան 24 տարեկան էր. վոսկրեղ, լայն զիւմա-
գծերով, քթարմատի մոտ համարյա իրար միացած
յերկար ու թավ հոնքերով և համարյա միշտ վար
կախված շագանակագույն արտեվանուհներով աղ-
ջիկ էր նա:

— Վերցրեք... Ուժը ձերն է: Վոչինչ չեմ ասելու, ասելու յեւ բան չունեմ...

Յե՛վ յուրաքանչյուր հարցաքննութ՞յունից հետո Լիզան ավելի համառ եր դառնում:

— Ի՞նչ եք ինձ շարունակ հարձաքննում: Յեղբայրս ՄՏ կայանում գյուղատնտես է, քույրս — ուսուցչուհի. նրա յերեխաները պիտոներն ես: Ի՞նչ ե, դուք իմ պատճառով ուզում եք նրանց ել սևացնել: Իսկ վոր յես ձեր ճամբով չեմ գնացել, դուք ինքներդ եք մեղավոր: Ինչո՞ւ դուք իմ ամուսնուն՝ Սիմեոնին քշեցիք՝ չգիտեմ ո՞ւր:

Յե՛վ անա Լիզային հայտարարեցին, վոր նա ուղարկվում է հյուսիսային ճամբարները, այնտեղ, վորտեղ՝ ինչպես ասում են՝ միացնում են Սպիտակ ծովը Լենինգրադի հետ և կառուցում են չտեսնված յերկարութ՞յամբ մի ջրանցք:

Ուրիշ բանտարկյալների հետ նրան յերկար ժամանակ տանում էյին նշանակված վայրը: Անցան ձրմեռային Լենինգրադը, մի լավ սառեցին Մուրմանսկի ճանապարհին, յերկար կանգ առան՝ առանց գիտենալու, թե վերանց ե լինելու վերջը:

Վագոնում յեղած խոսակցութ՞յուններն ել զանազան տեսակ էյին: «Ուղղիչ-աշխատանքային ճամբար.. տես, ի՞նչ խոսքեր են հնարել: Ուղղելի...»:

Իսկ Լիզան ուշադրութ՞յամբ դիտում է այն ամենը, ինչ վոր նոր եր նրա համար արտասովոր ու մտածում եր իր մասին:

Կայարանում մոտեցավ դռանը:

— Կարելի՞ յե դուրս գալ:

— Չի կարելի, — պատասխանեց հրացանը ձեռ-

քին մոխրագույն կոճկառներով շինել հագած տղան:

— Ի՞նչքան ես ստանում, վոր հսկում ես մարդկանց:

— Վոչինչ չեմ ստանում, քաղաքացուհի, ստացածս ել գնում է բանվորական որվա հաշվին, վորովհետև յես ինքս ել բանտարկյալ եմ:

— Ի՞նչպես թե բանտարկյալ:

— Շատ հասարակ, բանտարկյալ եմ: Ունեմ յոթ տարի, իսկ այժմ պահակախմբումն եմ:

2.

Յրտաշունչ մի որ, վաղ առավոտյան, հասան ճանբարը, շարք կանգնեցին և գնացին բարաքները: Անունները կարդացին, ստուգեցին, թե ով ինչ է կորցրել ետապում, ո՞վ ինչ գանգատ ունի: Տեղավորեցին բարաքներում: Նիհար Մայնկան տեղավորվեց Լիզայի հետ: Բարաքը մի ցածրիկ, գետնին կպած շինվածք եր, փոքրիկ լուսամուտներով և մի շարք յերկար նառերով. հատակը և կտուրը փայտաշեն, կտուրը տուրով ծածկված ու վրան հող ցանած: Յերկաթե վառարանը տաքացնում եր բնակիչներին: Սակայն այս բարաքը ժամանակավոր կացարան եր — կարանտին: Նորեկ բանտարկյալները պետք է նախ բժավոր և վորովայնի տիֆ հիվանդութ՞յան ստուգման յենթարկվեյին և ապա միայն ուրիշ տեղ վորսադրվեյին կամ ավելի խիտ տեղավորվեյին:

«Յե՛վ այս բարաքում ապրել հինգ տարի: Յե՛վ ամեն որ աշխատանքի գնալ: Վոչ չեմ գիմանա: Յե՛թե Սեմեոնին չգտնեմ, մենակ կհեռանամ»:

Ահա թե ինչու Լիզան կարգի չբերեց իր անկողինը: Սաստիկ հոգնած և դեպի կյանքն ու մարդիկ, ինչպես և դեպի ինքն իրեն անտարբեր, նա պառկեց անկողնու վրա և տարվեց խոր մտածմունքներով: Նրան չէին հետաքրքրում վոչ մարդիկ, վոչ կյանքը, նա անտարբեր էր դեպի ամեն ինչ: Իսկ Մայնկան, այն անյերևակայիլի բերդի ֆոնում արդեն հանել էր փայտե փոքրիկ պայտուակից իր ընկերուհիների նրկարներով յերկու բարձիկ, շրջանակով հայելին, պուդրան, մկրատը: Նա իր պլխավերևը զարդարել էր հին լրագրներից պատրաստած ժանյակե անձեռոցիկով, գրել էր պուդրայի տուփը, կախել էր հայելին, կողքին ել՝ մի չոր ծաղիկ, վոթեղից էր այդ ծաղիկը նրա մոտ, նա ինքն ել չգիտեր: Ամեն ինչ կարգի բերվուց հետո, նա նայեց շուրջը և ծիծաղելով ասաց.

— Տեղավորվեցեք, աղջկերք, վոչինչ, կարելի չե ապրել:

Իսկ հեռու անկյունում ծուռբերան Շուրկան այնպես էր խնամքով սանրում մազերը, վոր ճակատի ճախ կեսը ծածկվում էր ցանցառ շեկ փնջիկով, լիզվածի պես, իսկ աջ կեսը մնում էր բաց: Նա ուրախ և բարձր ձայնով յերգում էր լկտի յերգեր:

Յերեկո յեր: Կարանտինային բարաքի հեռավոր ձմրան մի յերեկո: Առաջին յերեկոներից մեկը, վորը պետք էր լուսացնել այստեղ:

Իսկ յերեկոյի հետ նոր տեղում վրա հասավ և՛, վիշտը, և՛ հեռու մնացած հարազարտների կարոտը, և՛ կարեկցութունը դեպի ինքը, վոր պետական մի ինչ վոր հազար ուրբու համար — պետք է նստեր այստեղ և վոտով-գլխով կորչեր, մի ինչ վոր յերկու

տասնյակ փութ կոխողային լավ հացի համար — պետք է նստեր այստեղ և վոտով-գլխով կորչեր, և զրուցասեր բարաքը, վորը մի ժամ առաջ վիճում էր, թե ո՞վ վորտեղ պետք է քնի, ինչո՞ւ յե դռնից քամի փչում և ո՞վ է լինելու նրանց ավազը, — հանդարտվեց, մոտասուզվեց:

Յեվ անսպասելիորեն լուսթյան մեջ լավեց ուղիոյ խիստ և խուլոտ հնչյունը, վոր սև սկավառակը չէին նկատել և վորը յերկար ու զիլ ձայնով հաղորդում էր «գրոհենք Սպիտակծովչենի տրասսի (գծի) վրա: Հունվարը պետք է դառնա ամենանշանավոր ամիսը Բալտիկ-Սպիտակծովյան ջրային ուղու շինարարության պատմության մեջ: Այսօր մեր բաժանմունքի ակումբում կայանալու յե հարվածայինների համաձանբարային հավաք»:

Բարաքը հանդարտվեց և ուշադրությամբ ականջ դրեց ուղիոյի հաղորդած անձանոթ բառերին ու նախադասություններին: Միացրին ակումբի հետ, և ահա ուրիշների ձայների աղմուկով և ծափահարություններով լցվեց բարաքը. նրանք մոռացության սովին մտածմունքները և ստիպվեցին լսել — գուցե վորևե նորութուն կա, գուցե վորևե նոր որևեք է դուրս յեկել ազատության մասին, սակայն ռադիոն հաղորդում էր վոչ թե ազատության, այլ այն մասին, վոր բեռնապորժ Ռյումինի բրիգադը հրաժարվելով հերթափոխությունից, աշխատեց 14 ժամ, տալով 200 տոկ. արտադրանք:

Ապա այդ ձայնը փոխարինվեց ուրիշ հարվածայինի ձայնով, վորը հաղորդում էր, թե ինչպիսի գող էր նա առաջ, թե մինչև Սպիտակծովչեն (Բել-

մորսորոյ) գալն ինչպես եր հրաժարվում աշխատանքից
և ինչպես այժմ վերակոփվել է, կատարելով որական
նորման 150 տոկոսով:

Յե՛վ այն բոլորը, ինչ հաղորդում եր ռազիոն,
կարծես ուրիշ աշխարհից լիներ: Կառուցվում է աշ-
խարհի խոշորագույն ջրանցքը: Իսկ ի՛նչիս է պետք
այդ ջրանցքը, կամ ի՛նձ ինչ, վոր այս կամ այն մեկը
«վերակոփվել է»: Միայն թե գնայի տուն, գնայի
այնպես, վոր վոչ վոք չնկատեր, վորովհետև այստեղ
յես կյանք չունեմ և չեմ ել ունենալու:

Յե՛վ թե այս և թե հետևյալ գիշերները Լիզան
ծանր ու անհանգիստ եր քնում, բնավ չհաշտվելով
այն մտքի հետ, վոր նրան վիճակված է ապրել ճամ-
բարում:

3.

Կարանտինավորներին թույլ չեյին տալիս հարա-
բերություն ունենալ ճամբարավորների հետ: Նրանց
տանում եյին աշխատելու առանձին տեղեր և Լիզան
առաջին որը գուրս յեկավ աշխատանքի: Նրանց բե-
րին բեռնատար ավտոմեքենաներից ավազ պարպելու:
Ավազը սառած եր, հագուստը չեր տաքացնում, շուրջն
ամեն ինչ վայրի յեր և ցաքուցրիվ: Գնում եյին մար-
զիկ, սլանում եյին ավտոմեքենաներն ու սահնակնե-
րը, ձյունապատ խրամատներում նստած եյին բան-
վորները և փորում եյին գետինը, հետո այնտեղ փամ-
փուշտ եյին գնում, պայթեցնում և կրկին փորում,
լցնում հողը ձեռնասայլակների մեջ և տանում: Իսկ
վորտեղ է ջրանցքը, վորն այստեղ կառուցում են:

Լիզան չգիտեր և չեր ել ուզում իմանալ: «Անկարելի
յե, վոր յես այստեղ յերկար մնամ»:

Սկզբում նա հավատում եր, վոր ահա մի հրաջքով
կբացվի բարաքի դուռը, ներս կմտնի կոճկառներով
պետը և կհայտարարի՝ «Յելիգավետա Սորոկինա, հա-
վաքիր իրերդ և գնա մարդուդ մոտ»: Յե՛վ կամ գու-
ուր կբացվի և ներս կմտնի մարդը, կամ նրան մենակ
կազատեն, և նա կվերադառնա յեղբոր մոտ՝ ՄՏ կա-
յանը: Սակայն որերն անցնում եյին, հրաջքը չեր կա-
տարվում, աշխատանքը ծանր եր և անդուրեկան: Իսկ
յերբ Լիզան փորձեց հարցնել բարաքի ավազին իր
մարդու մասին, նրան մեկ որից հետո հայտնեցին, վոր Սե-
մեոնը ճամբարներում չե: Լիզան հոնքերը կիտեց, կո-
պիտ վերաբերմունք ցույց տվեց բարաքի ավազին և
հետևյալ որն աշխատանքի չգնաց:

Նրա լուսկյաց վիշտը և համառությունը փոխվեց
այժմ կնոջ կատաղի հանդգնության, այն կնոջ, վորը
կորցնելու բան չուներ այլևս, և վորի համար միև-
նույն է՝ թե ինչ կպատահի իր հետ: Նա աշխատան-
քից փախչողի անուն ստացավ:

Նրա հացի նորման պակասեցրին: Նա առանձին
կաթսայից ջրալի ապուր եր ստանում, այն ել հա-
տուկ փոքրիկ պատուհանից, վորի գլխին նկարված եր
մի այլանդակ դեմք և սպիտակ տառերով ծուռումուռ
գրված՝ «Այստեղ ապուր ե տրվում մեծ ջրանցքի շի-
նարարությունը վիժեցնողներին, աշխատանքից հրա-
ժարվողներին, գործալիքներին և դատարկապորտներին»:

Այդ խոսքերը նրա պատվին չեյին կաչում: Նա լուռ
ստանում եր իր պնակը, նստում, ուտում և ապա
ծանր, հոգեմաշ թախիծով ընկնում եր նառի վրա:

Մեկ անգամ յեկավ պետր—դա մի թիկնավետ, ամբակազմ, լայներես տղա յեր, հողմածեծ դեմքով, և շիփ-շիտակ կանգնեց նրա առաջ ու ասաց.

«Ինչո՞ւ չես ուզում աշխատել»: Լիզան չեր պատասխանում: «Դու գիտես, թե ինչ ենք կոռուսցում մենք այժմ այստեղ: Ձեզ բացատրել են»: Լիզան լուռ եր: «Իհարկե, յես նրանց բացատրել եմ,—մե՛ջ մտավ բարձրահասակ, նիհար, մոտ 35 տարեկան դաստիարակչուհին:—Իհարկե, յես նրանց բացատրել եմ, թե նա, ով լավ աշխատի ջրանցքում, արտոնություններ կստանա, նրան կհաշվառվեն աշխուրեր: Յեթե, ասենք, աշխատել ես 3 ամիս, ապա դա քեզ կհաշվառվի չորս ամսվա աշխատանք: Այդ բոլորը յես նրանց բացատրել եմ»:

— Իսկ սա:

— Իսկ սա ասում ե՛ «Իզուր ե»:

— Ապա թողեք մեզ յերկուսով:

Չոր ու նիհար Մայնկան ծիծաղեց և դաստիարակչուհու ձեռքից քաշեց, իբր թե ուզում եր ասել, թե Լիզայի գործը հաջողվում ե, նա յերկար չի մնա բարաքում: Ասենք Լիզայի իրա մտքովն ել անցավ այդ լիբբ յենթադրությունը. «Իրանք բոլորն ել լավ որինապահներ են մինչև առաջին կնոջ պատահելը: Ապա մի ձեռք առնեմ սրան»:

Յերբ նրանք բարաքում գտնվող դաստիարակչուհու նեղ խցիկում մնացին մենակ, Լիզան, աչքերը հառած, նայեց պետին՝ «այ, վաղուց պետք եր այդպես», և ձեռքը զրեց նրա ուսին:

Պետր, հասկանալով բանի եյությունը, ծիծաղեց.

— Սորոկինա, դու իզուր ես կարծում, վոր յեթե

աչքով անես պետին, լավ կյանքի կտիրանաս, բայց իմացած յեղիր, վոր աչքով անելու համար՝ մեզ՝ պետերիս՝ իզույատոր են նստեցնում և հատուկ հրաման կա՝ «ով կանանց նկատմամբ կուպիտ վերաբերմունք ե ցույց տալիս, այսինքն կանանց նկատմամբ անպատկառություն ե անում, այսինքն՝ չի խնայում կանանց ամոթխածությունը, ով ոգտվում ե իր ծառայական զիրքից, նա պատժվում ե որենքի ամբողջ խստությունը: Յեվ քեզ համար, Սորոկինա, ավելի լավ ե չչարանալ, չհամառել, վորովհետև դու ուրախություն չես գտնի վոչ այդպիսի լավ կյանքի տիրանալուցդ և վոչ ել այն ժամանակ, յերբ ամբողջ ժամանակ միայն ջրի ապուր ստանաս: Դու դեռ պետք ե ապրես, ինչո՞ւ յես կյանքդ փչացնում:

— Դե, ել ի՞նչ կարիք կա այդպես խոսելու, մենք...

ինքդ ել գիտես, թե ինչպես եր գործը, կարիք ել չկա քեզ պատմելու, դրա համար չե, վոր այստեղ եմ յեկել: Ահա թե ի՞նչ եմ ուզում յես ասել—այստեղ հավաքվածներդ անազին բազմություն եք և դուք պետք ե այնպիսի ջրանցք կառուցեք, վորի նմանը աշխարհիս յերեսին վնչ յեղել ե, վնչ ել կա: Յերբ դու այնտեղից վերադառնաս և Սպիտակծովչենում աշխատելու մասին ձեռքիդ վկայական ունենաս, քեզ պատմելու կզիմավորեն,—ծիծաղեց պետը,—վորովհետև մենք՝ բոլշեվիկներս՝ ընդունում ենք, վոր մարդուս վերակուսման լավագույն միջոցը — դա՛ աշխատանքն ե, և մեզ մոտ, Սպիտակծովչենում աշխատում են, աշխատում են և՛ ուժգնապես, և՛ խստորեն: Ինչ ասել կուզե, վոր հեշտ աշխատանք չե, բայց դա մի աշխատանք ե, վորն սքանչելի նպատակ ունի՝ ջրանցք կառուցել, իսկ դա

նշանակում է յերկիրը դարձնել ավելի հարուստ, անձամբ մասնակցել, վորպեսզի մեր յերկրում մարդիկ ավելի լավ ապրեն, իսկ յերբ մարդիկ ավելի լավ ապրեն, այն ժամանակ ավելի ու ավելի քիչ կլինեն դողեր, խաբեբաներ և ուրիշ վնասակար տարրեր:

Յե՛վ ահա այսպես նրանք նստած եյին խցիկում: Պետր խոսում էր, իսկ Լիզան և՛ լսում էր և՛ չեր լսում, ավելի ճիշտ՝ լսում էր միայն նրա շատ հանդարտ, հասարակ ձայնը, վորը խոսվոտ էր դարձել քամուց և ցուրտ յեղանակներին հաճախ խոսելու պատճառով:

— «Ի՞նչ է ուզում ինձնից, ազիտացիա յե անում, պատմում է ջրանցքի մասին»:

— Ի՞նչ էք ուզում ինձնից, — ասաց նա հանկարծ բարկացած և ուշադրութունը լարած:

— Ուզում եմ, վոր գնաս աշխատելու...

— Միթե քիչ են ձեզ մոտ աշխատող ձեռքերը, վոր յես, հրաժարվողս, մենակ խանգարում եմ ձեր շինարարությունը: 240 կիլոմետր ջրանցքի համար յես մենակ ի՞նչ եմ, վոր պետը յեկել է ինձ համոզելու...

— Ինչո՞ւ իզուր տեղն արհամարհել այն մարդուն, վորը դեռ կորած չե սոցիալիզմի համար: Ա՛յ, դու մեր լրագրերը չես կարդում, թե չե կիմանայիր, վոր մենք այստեղ յերկու գործ ենք կատարում՝ և՛ ջրանցք ենք կառուցում, և՛ մարդիկ ենք դաստիարակում:

— Ել ի՞նչ մարդ կարող է ինձնից ստացվել, յեթե յես գնամ կեղտոտ սպիտակեղեն լվանամ, կամ քարեր շուռ տամ:

— Յերևակայիր, վոր հենց այդ դեպքում ել քեզնից մարդ կստացվի: Սոցիալիստական յերկրում յուրաքանչյուր աշխատանք պատվավոր է, և ամեն մի

աշխատանքում կարող ես հերոս դառնալ: Բայց յես քեզ հասկանում եմ: Դու ուզում ես վորակավոր դառնալ: Այդ դեպքում գնա տպարան: Կսովորես լրագիր շարել, տպել: Չե՞ վոր դու գրագետ ես և այն ել՝ լավ գրագետ: Ուրեմն հեշտությամբ կարող ես գրաշարուհի դառնալ: Վաղը կգաս, իսկ յես կասեմ դաստիարակչուհուն, վոր քեզ բաց թողնի: Կհավաքես իրերդ, կապրես ուրիշ բարաքում:

Յե՛վ Լիզան վորոշեց փորձել:

4.

Շտապով հրաժեշտ տվեց նա Մայնկային, ծուրբերան Շուրկային և միքանի ուրիշներին, վորոնց հետ ծանոթացել էր բարաքում: Մայնկան նրան ձանապարհ պցեց առանց նախանձի: Նա հպարտորեն հայտնեց, վոր արդեն վաստակել է 32 բանվորական որ, վոր այժմ կաշխատի վաստակել յերկու-յերեք ամսվա բանվորական որեր ևս, և, մեկ ել տեսար, կզեղչեն, և հետո արդեն կհավաքի իր իրերը և կվերադառնա տուն: Ծուրբերան Շուրկան գրվեց ազիտքրիզադում և այժմ, կատարելով խրամատներում իր աշխատանքի նորման, գնում էր ակումբում պարապելու: Այնտեղ ռեժիսյորը, վորը բանտարկյալներից էր և իսկական պրոֆեսիոնալ ռեժիսյոր, սովորեցնում էր նրանց շարժումներ անել և բուրգեր կազմել: Այդ պարապմունքների ժամանակ նրանք յերգում եյին ինչ վոր նոր տարրերինակ և նրանց համար նույնիսկ անհասկանալի յերգեր, յերգում եյին ջերմորեն և վոգևորված, աշխատելով ծրագրի յուրաքանչյուր համարի վրա: Լիզան մին-

չև անգամ տեսել եր, թե Շուրկան ինչպես եր ակում-
բում մասնակցում ներկայացումներին, կենդանի լրագ-
րավաճառի համազգեստը հագին, քայլում եր տղանե-
րի հետ և կյանքից և ժամանակից կորցրած խուպոտ
ձայնով յերգում եր.

Աշխատանքում չխնայինք
Ջանքերը մեր բոլոր,
Սպիտակ ծովները շտապ,
Ժամկետից շուտ ավարտենք:

Յեվ ապա քայլելով

Շնորհավորում ենք ձեզ
Հաղթանակներով ձեր.
Ցանկանում ենք ձեզ
Շուտափույթ ազատվել,
Արտոնություն վայելել:

Նոր բարաքում, վորտեղ ապրում էին յերիտա
սարգ գրաշարուհիները, արդեն նաուեր չկային, այն-
տեղ գրված էին մահճակալներ, իսկ անկյուններից
մեկը հատկացված եր կարմիր անկյունին՝ թերթերով,
գրքերով և լոզունգներով, վորոնք այնպես ծանոթ էին
դեռ անցյալ կյանքից:

Գրաշարուհիներից ամեն մեկը — իմիջի այլոց այս-
տեղ կային նաև կազմարարուհիներ և տպողներ —
ունեյին իրենց տետրերը, վորտեղ գրում էին յերե-
կոյան հանրակրթական դասընթացների անցած նյու-
թը: Նրանց վերմակներն ավելի մաքուր էին, իսկ
բարձերն՝ ավելի շատ: Նրանք ապրում էին ամբողջ
կողեկտիվով, մանր ընդհարումներն ու վեճերը լուծում

էյին միասին, ժամանակն ու նորման նույնպես դա-
սավորում էին ընդհանուր համաձայնությունով:

Հեշտ աշխատանքը դուր եր յեկել կիզային: Այս-
տեղ նա կարող եր մենակ կանգնել տառարկղի առջև
և կենտրոնացած ուշադրությամբ շարել պահանջվող
տառերը, այստեղ նրան չէին անհանգստացնում հար-
ցաքննություններ, վոչ վոք կողքից չէր գոռում, այստեղ
տաք եր, փչում եր յուղաներկի և նավթի հոտը, իսկ,
վոր գլխավորն ե, նա կարող եր այստեղ մտածել
անցած և ներկա կյանքի մասին...

Նա դեռ ուշադրությամբ դիտում եր շրջապատող
աշխարհը, աշխատելով հասկանալ, թե ինչու իրենց
մշտական բնակավայրից վերցված մարդիկ վարժվում
են այստեղի կյանքին, ինչու գողերն աշխատում են
այստեղի հարվածային բրիգադներում, նախկին ան-
բարոյական կանայք կատարում են ներմաները 170
տոկոսով, ինչու այստեղ, ինչպես և ամեն տեղ, վոր-
տեղ նա յեղել եր առաջ, — ամբողջ յերկրում, կար-
գում եր նույն լոզունգները հնգամյակի, հարվածային
տեմպերի, սոցիալիզմի և աշխատանքի մասին, վոր-
պես պատվի գործի, փառքի գործի, առաքինության
և հերոսության գործի մասին:

Ժամանակ առ ժամանակ նրան թվում եր, վոր
այդտեղ բանտ չե, վոր նա այնտեղ գտնվում ե իր
հոժար կամքով — վորակավորվում ե գրաշարուհի դառ-
նալու համար: Առանձնապես մոռացվում եր այդ,
յերը շարվում եր ճամբարային «Պերեկովկա» թեր-
թը: Կիզան, նախքան շարելը, ուշադրությամբ կար-
գում եր տեքստի յուրաքանչյուր կտորը: Սկզբում
նրան հանձնարարում էին վերնագրերը շարել խոշոր



տառերով: «Զրաբաշխ ջրանցքի գրոհի հաջողությունը Սպիտակծովչենի հարվածայինների պատվի գործն է: Զրաբաշխ ջրանցքի կառուցման համար հավաքված են Սպիտակծովչենի ամենաընտիր մարզիկը: Հարվածածային-գրոհայիններ, ձեզ ե նայում ամբողջ Բալթիկ-Սպիտակծովյան ճամբարը»: Այդ ընտիր մարզկանց թվում էյին գտնվում 35-րդ հողվածով դատապարտված հայտնի քրեական հանցավորները, վորոնց մասին նա իմացավ թերթում տպված լուրերից:

Լիզան տեսավ, թե ինչպես մեկ անգամ նրանք անցնում էին իրենց նվաղած կարմիր գրոշով: Դրոշը տանում էր մի ժպտերես տղա, վորը քայլում էր խիստ համաչափ կերպով, ուժեղ թափահարելով ազատ ձեռքը և նայելով չորս կորմը: Նա «կյանքի մարզ էր» — գյուղական հարբածների կռվում նա փայտի հարվածով սպանել էր գյուղիորհրդի անդամին, վորի պատճառով էլ ուղարկեցին ճամբար, աշխատում էր ուրախ և հոմերաշխ, զգում էր, վոր ինքը «սոցիալապես հարազատ տարը է» և շուտ կուղղվի: Ըստ իր բանվորական որբի, նա արդեն ուներ մի տարուց ավելի զեղչ և այժմ դրոշը տանում էր հարվածային-գեկոր-դիստի լիովին վաստակած իրավունքով:

Յեվ նրան հետևող գրոհային-հարվածայինների զեմքերի վրա չեր յերևում այն անտարբերության և հոգնածության արտահայտությունը, վորը Լիզան նկատում էր առաջ: Ճամբարային տաք քոթանակները (տեղզրեյկա), ականջավոր գլխարկները, ձտկավոր կոշիկները, թաղյակները (վալենկի), ավելի սակավ տրեխները, — այդ բոլորը բանտային բնույթ չեյին կրում:

«Դրսից» շատ քիչ էր նամակներ ստացվում: Լիզայի յեզբայրը ՄՏ կայանից յերկու անգամ էր նամակ ուղարկել: Նա հաղորդում էր, վոր այժմ վերանորոգում են մեքենաները ցանքսի համար, ինքը նորերս ամուսնացել է, կինն արդեն հղի յե, կյանքը հետաքրքրական է... «Ի՞նչպես է այդտեղ քո ապրուստը, գրիր: Հուսով եմ — կդառնաս ԽՍՀՄ-ի ազնիվ քաղաքացուհի, կվերադառնաս աշխատանքային ընտանիքը», և ապա նա կրկնում էր մոտավորապես նույն խոսքերն ու լողունգները, վորոնք նա կարգացել էր «Պերեկովկա» թերթում, լսել էր ռադիոյով կամ մասնավոր միտինգներում: Նրան հետաքրքրում էր այդպիսի համառ, անդադրում հիշեցումը մարդու վերակուսման հնարավորության մասին:

Ինչպես չեն հոգնում նրանք միևնույն բանի մասին խոսել: Համարից-համար սերտել են տալիս՝ «Ե՛լ ավելի բարձր մարդու վերափոխման համար մղվող պայքարի վորակը», «Բարաքը, վորտեղ ապրում է մասսան, չպետք է դիմազրկված լինի: Բարաքը — դա դպրոց է, կարմիր անկյուն և ակումբ: Բարաքում տիրող համապատասխան պայմաններից են կախված ճամբարավորի բարոյական զրությունը և նրա արտադրական հաջողությունները: Վատ դաստիարակը — պատնեշ է ճամբարավորների և ճամբարների զեկավարության միջև: Յուրաքանչյուր հետ մնացող ճամբարավորին պետք է ամրացվի հարվածային-շեֆ, վորը պատասխանատու լինի իր յենթաշեֆի համար»:

Հնազանդորեն շարելով այս սողերը, Լիզան նկա-

տում եր, վոր սրանք վոչ թե սովորական անգիր արած խոսքեր են, այլ արտահայտում են ինչ-վոր մեծ, խորամանկ սխտեմ, վորի արմատներն ու իմաստը դեռ հասկանալի չեն:

Յերեք ամիս հետո Լիզային բերին նրա բանվորական որերի առաջին հաշվանցումը: Բոլոր գրաշարուհիների առաջ հայտարարեցին, վոր նա աշխատել է որինակելի կերպով, իրեն լավ է պահել, կատարել է զերակատարել է նորման: (Լիզան յերբեմն մնում էր տպարանում վորոշված ժամերից ավելի՝ ժամանակը շուտ անցկացնելու համար): — Այդ պատճառով ներվում է նրա վերջերս արած ըմբոստությունը և արվում է առաջին զեղչը — 15 որ: Լիզան, գլուխը կախած, լուռ լսում էր, ապա շրթունքները շարժեց, կարծես ուզելով ինչ-վոր բան ասել, բայց վոչինչ չասաց և ան ըաշեց: Նրա վրա ծիծաղում էին՝ «ախ է քաշում, չի ուզում ավելի շուտ հեռանալ ճամբարից...», իսկ Լիզան արդեն հաստատապես վորոշել էր հետևյալ յերեք ամսում ստանալ ավելի մեծ զեղչ, ինչպես ստացել էր տպարանում իր կողքին աշխատող ծիծաղասեր Վերան, վորը ճամբար էր ուղարկված փոստի թալանին մասնակցելու համար: Նա Մպիտակ-ծովչենի հարվածայնուհի յե:

Հետևյալ որը, թերթը շարելիս, Լիզան կարգաց. «Պահանջում ենք առավելագույն հարգանք զեպի սպիտակծովչենցիների անձնավորությունը»: Այդ գրել էին սանխարները մասին, վորոնք զատի էին տրված այն անտարբեր և անփույթ վերաբերմունքի համար, վոր ցույց էին տված ճամբարներից մեկի բարաքների մաքրության հանդեպ:

Առավելագույն հարգանք: Ինչո՞ւ: Վորովհետև ջրանցք են կառուցում: Իհարկե, մեծ գործ է, բայց և այնպես, ինչո՞ւ առավելագույն: Նույնպես և պետք նրա հետ խոսելիս, պատմում էր, վոր պետք է հարգել աշխատանքը և աշխատանքի մարդկանց: Յեվ մինչև անգամ նրա ձայնի տոնը, վորը հիշում էր Լիզան, արտահայտում էր այդպիսի հարգանք:

Յերեկոները, խմբակային պարապմունքներից, ուղիով հաղորդվող բարձրաձայն ընթերցումներից հետո, ճամբարավորուհիները պատմում էին իրենց մասին, մտքերի փոխանակություն էին կատարում, վիճում և աշխատում հասկանալ, թե ինչ է լինելու հետագայում: Համարյա նրանցից վոչ մեկը, նախքան ճամբար ընկնելը, բանվորուհի չեղ յեղել՝ գյուղ, փողոց, բանտ — ահա անցյալը, զեպի վորը չեյին ուզում վերադառնալ: Այժմ նրանք գիտեն գրաշարության գործը, կարող են աշխատել:

Նրանց խմբակը հաճախում էր մի նախկին կոմունիստ տղա, վորը դուրս էր արված կուսակցությունից պետական փողերը վատնելու համար: Նա աշխատում էր հասկացնել մեկուկես տանյակ կանանց, թե ինչպես պետք է պաշտպանել սոցիալիստական սեփականությունը և թե ինչու յե սրբազան սոցիալիստական սեփականությունը, ինչով է նա սարբերվում անիծված բուրժուականների — կապիտալիստների սեփականությունից: Կանայք թերադրուկ յամբ գրում էին լողունգներ և փոստանավորներ, նրանց մեջ դնելով իրենց առանձնահատուկ բովանդակությունը, և շատերի համար սոցիալիզմ կառուցող կուսակցության, հակահեղափոխականներին պատժող Միացյալ

Պետքազովարչության վերաբերյալ խոսքերը հանդիսա-
նում եյին նոր բացվող ճշմարտության խոսքեր:

6.

Ճամբարում գարունն ուշ սկսվեց: Մայիսի սկզբ-
ներին դեռ ձյուն կար: Հալչույ ձյան շուրը դանդա-
դորեն հոսում էր դեռ կիսաշեն կառույցների վրա:
Իսկական շոգերն սկսեցին հունիսին: Այժմ Լիզան
տպարանից ուզում էր փողոց դուրս գալ, նրա համար
այլևս նեղ էր այնտեղ, իր շարվածքի փոքրիկ արկղի
մոտ: Նա այլևս չէր լուռ, մտածմունքով չէր տար-
վում, այլ բանվորական որերի հերթական հաշվան-
ցումից հետո նա զգում էր, վոր իր տետրում կարող
է գրել «հարվածայնուհի» բառը:

Նա արդեն գիտեր, վոր Սպիտակ ծով շենում ժայռը
պայթեցնելու համար ստիպված յեղավ 4 միլիոն
պայթյուն կատարել, իսկ դուրս հանած ժայռի ընդ-
հանուր քաշը — 5 միլիոն տոնն էր: Նա գիտեր նույն-
պես, վոր Լենինգրադից Սորոկի հասնելու համար
պետք էր նավով 7 որ անընդհատ գնալ, առանց նա-
վահանգստում կանգնելու, իսկ ջրանցքով՝ կալահանջվի
միայն 6—7 որ: Նա գիտեր նույնպես, վոր Սպիտակ
ծով շենի վրա ծախսված գերանների ընդհանուր յեր-
կարությունը 20 հազար կիլոմետր է, այսինքն՝ ամ-
բողջ յերկրագնդի շրջագծի կեսից ավելին:

Մեկ անգամ յերեկոյան Լիզան նստած էր նեղ,
լեփ-լեցուն ակումբում հարվածայնուհիների հավաքին
և լսում էր ճամբարի պետի ջերմ խոսքերը —

«Իրավեցեք հասարակական աշխատանքի մեջ ձեզ

շրջապատող ճամբարուհիներին, աճեցրեք ակտիվ, առա-
ջացրեք ճամբարուհի-կանանց մեջ սեր դեպի հասա-
րակական աշխատանքը, արթնացրեք նրանց մեջ հա-
սարակական հետաքրքրություն, և այն ժամանակ
նրանք կհասկանան այն մեծ ուրախությունը, վորը
մարդուն գիտակցություն է տալիս և մյուսներին
սգուտ է բերում»:

Ապա պետը խոսում էր ճամբարի մարդկանց վե-
րակոփման մասին, ասում էր, վոր մինչև անգամ հեշ-
տությամբ չուզվողների միջև պետք է աշխատանք
տանել վոչ թե պարզապես նրանց հետ մղելով, այլ
ոգնել նրանց ըմբռնելու այն ճանապարհի թերու-
թյունն ու արատավորությունը, վորի վրա նրանք
կանգնած են: Այ, որինակի համար, Լիզա Սորոկինան,
վորն աշխատանքից հրաժարվում էր...

Լիզան հուզվեց: Նա նկատեց, վոր նախագահու-
թյան մեջ նստած թիկնավետ պետն իր հայացքով
փնտռում էր նրան: Նա գլուխը խոնարհեց, զգալով,
վոր յերեսը կարմրել է հուզմունքից և ամոթից...

«Ահա այդ Լիզան ըմբոստություն էր անում, բայց
ընկ. Աֆանասևն, իր հմուտ մոտեցումով, նրան ուղիղ
ճանապարհի բերեց, և այժմ Սորոկինան ներկա յե
այստեղ տպարանի հարվածայնուհիների թվում»:

Դանիլ ճըր վոզևորված ծափահարում էր, իսկ Լի-
զան ուզում էր, վորքան կարելի յե, շուտ հեռանալ
այնտեղից, և ինքն էլ չգիտեր, արդյոք լաց լինել, թե
ծիծաղել:

Նրա կողքին նստած դաստիարակչուհին շշնջաց
նրա ականջին. «Հիմա դու պետք է խոսես»: Լիզան
նեղ նոր պատրաստվում էր ասել «վոչ», յերբ նա-

խագահությունից արդեն նրան կանչեցին. «Յելիզավետա Սորոկինա»: Լիզան վախեցած տեղից բարձրացավ, գնաց բեմ: Նա չգիտեր, ինչի՞ մասին խոսել և ի՞նչ պատմել ժողովականներին: Նրան թվում էր, վոր անհամենը կծիծաղեն նրա վրա և կասեն՝ «Մրան նայեք, մեջ է ընկել, վոր իրեն ցույց տա»: Նա մոտեցավ սեղանին, դողդոջուն ձեռքերով ուղղեց քթանակի ծալքերը և լուռ կանգնեց:

Վերջապես նա սիրտ առավ և սկսեց պատմել, վոր ինքը՝ Լիզա Սորոկինան, աշխատում է տպարանում և ինքն էլ չգիտե, թե ինչպես հարվածայնուհի դարձավ, աշխատելու յե նաև հետագայում և այլևս վոչինչ չունի ասելու, բայց միայն նա ըմբոստություն չէր անում, այլ ուղղակի չէր աշխատում, վորովհետև չէր հասկանում:

Դահլիճն սկսեց ծիծաղել, ծափահարել: Լիզան վերջնականապես հուզվեց և, ոգտվելով դահլիճում տիրող աղմուկից, ծափահարություններից, անցավ բեմի հետևը: Ապա Լիզան նայում էր կենդանի լրագիրը, աշխատելով ըմբռնել ջրանցքի մասին յեղած խոսքերի իմաստը: Առանձնապես նրան դուր յեկավ յերկարահասակ ու նիհար, լավ հագնված տղան, վորը պարեց, յերգեց իր հեղինակած յերգերը: Այդ տղան մարդասպանություն էր կատարել և այժմ իր որական նորման կատարում էր 150 տոկոսով: Նա յերգում էր ըմբոստություն անողների, աշխատանքից հրաժարվողների մասին.

Բանվորներ ենք չե՞ վոր մենք ամենքս,
Յեվ յետում է աշխատանքը հույժ,
Հաշվված որեր են մնացել միայն:

Դե, ուժ տվեք, տղերք,
Թափ տվեք, սիրելիք,
Հետամնացներին բուքսիրի քաշեք:

Միքանի որից հետո Լիզան, շարելով պետի ճառը և հասնելով մինչև այն տեղը, վորտեղ խոսվում էր իր մասին, կրկին կարմրեց, իսկ յերբ լույս տեսավ թերթը, նա կտրեց ճառի մի մասը, դրեց ծրարի մեջ և ուղարկեց գյուղատնտես յեղբորը:

Դա նրա առաջին նամակն էր ճամբարից:

7.

Դրանից հետո գործն ինքն իրեն գնաց. Լիզային ինդրեցին աշխատանքից հրաժարվող բոլոր կանանց համար կոչ գրել: Կոչը խմբագրեցին ընդհանուր ուժերով և ուղարկեցին տուգանման իզույատորը, վորտեղ նստած էին աշխատանքից փախչող կանայք: Այդ նամակում Լիզան, գիմելով նրանց, համոզում էր դուրս գալ աշխատանքի: Նա պատի թերթում գետեղեց իր առաջին թղթակցությունը գրաշարուհիների կողմի վի մասին: Թղթակցությունը շարեց ինքը, ուղղեց բոլոր սխալները և, մեքենայի առջև կանգնած, սպասում էր թերթի առաջին որինակին:

Մրդեն բազմիցս նա խոսել էր պետի հետ ճամբարի կյանքի վերաբերյալ ինդիրների շուրջը և արդեն իր անձնական շահերը մի կողմ թողած, նա այժմ խոսում էր պետի հետ ավելի ընդհանուր հարցերի շուրջը — ի՞նչ է ջրանցքը, ինչու համար է նա կառուցվում, չի՞ կարելի արդյոք եքսկուրսիա կազմակերպել գեպի Ղյուզնեբը:

Նրա դիմումը հարգվեց: Նրանց համար եքսկուրսիա կազմակերպեցին: Իրված էյին շլուզները արդեն պատրաստի՝ արկղները՝ ինչպես պարերի դահլիճի կամ թատրոնների հատակը, պատերը, կարած հատակը և դարպասները շինված էյին փայտից, գերան-գերանին հարմարեցրած, վորոնք, փայլելով արևի տակ, պարծենում էյին իրենց վորակով և խնամքով կատարված աշխատանքով:

Մեկ բան՝ դեռ անհասկանալի յեր Լիզային, թե ինչպես կարելի յե այնպես ճիշտ հաշվել 240 կիլոմետրը, վորպեսզի շլուզից հոսող ջուրը թափվի ջրանցքը և շլուզը: Ի՞նչպես են կարողացել գծագրել և գետի վրա անցկացնել անտառների և յեռների այդ հսկայական պլանը, ձյան և ջրվեժների միջով: «Այս ամենը գիտության գործն է, — ախ քաշելով ասաց նա, — գիտություն ունեցող մարդը ամեն ինչ կարող է անել»:

8.

Յերկրորդ ձմեռը Լիզան աշխատում էր, վորպես փորձված գրաշարուհի և սովորեցնում էր նրանց մոտ նոր աշխատանքի ընդունվածներից շատերին: Նա նկատում էր նրանց աչքերում նույն անըմբռնումը, փախը, յերբեմն և համառությունը, վորն ուներ ինքը, ուստի կարողանում էր հասարակ խոսքեր գտնել համոզելու համար: Նա շատ չեր խոսում, իշխանություն կամ գերազանցություն ցույց չեր տալիս, բուքսիրի յեր վերցնում աշխատանքից հրաժարվող 2—3 հոգու, նշանակել էր տալիս նրանց տպարանում աշխատելու

իր վերահսկողության տակ, աշխատում էր նրանց հետ, և արդեն հազիվ թե հարվածայինների վորևե հավաք անցներ առանց նրա մասնակցության: Չե՞ վոր նա կարողացել էր «Պերեկովկա» թերթը՝ վերնագրից մինչև ստորագրությունը, և նրան ծանոթ էյին շինարարության ուրախություններն ու տրամությունները:

Մեկ անգամ յեռուն աշխատանքի ժամանակ հուզված ներս մտան տպարանի պետը, պունկտի պետը, բաժանմունքի պետը և Լիզային անծանոթ մի նոր մարդ: Հեծելական յերկար շինել, խոհուն, հողմածեծ լայն դեմք, մոխրագույն հանդիստ աչքեր: Յերևի նա շատ մեծ պետ էր, վորովհետև ոճիքի կոճկառների վրա ուներ 4 ումբ: Նա դիտեց տպարանը, աշխատող կանանց: Նկատելով Լիզային մյուս գրաշարուհիների գլխների և ուսերի վրայից, մտտեցավ նրան:

— Ապա, արի այստեղ: Վո՞ր հողվածով ես մեղադրվել: Լիզան պատասխանեց: Ի՞նչպես ես աշխատում: Պետը, վոր կանգնած էր նրա կողքին, վկայություն ավեց Լիզայի մասին, վոչ մի խոսք չասելով անցյալում յեղած նրա ըմբոստությունների մասին:

— Նա մեզ մոտ որինակելի յե, — ավելացրեց գաստիարակչուհին:

— Իսկ նրա ժամկետը մե՞ծ է:

— Հինգ տարի:

— Ի՞նչքան ժամանակ է, վոր այստեղ ես:

— Մի տարուց ավելի յե:

— Բանվորական որերի հաշվանցում ունե՞ս:

— Յերեք և կես ամիս:

— Վոչինչ, վատ չե: Լավ ես աշխատում: Վո-

չինչ... վոչինչ... Յեվ հանկարծ, բարեհոգաբար, շատ բարեսրտորեն ժպտալով, ավելացրեց.

— Այ, տես, Սորոկինա. շուտով մենք ավարտում ենք ջրանցքի շինարարութիւնը: Քեզ հայտնի՞ յե: Մեծ արտոնութիւններ են լինելու: Կարող ե լինել և տուն վերադառնաս:

— Ինձ դեռ մնում ե 3 և կես տարի:

— Վնչ, ինչո՞ւ 3 և կես տարի, ավելի պակաս կմնաս: Պետք քո մասին լավ կարծիք ունի՞ որինակ ես տալիս, բուքսիրի յես վերցնում հրաժարվողուհիներին: Ահա ինչ, Լիզա,—ասաց նա հանկարծ,—ինչ կանեյիր, յեթե վաղը քեզ ազատեյինք:

Լիզայի սիրտը դողաց: Այժմ նա հավատում եր այն ամենին, ինչ ասում էին: Ի՞նչպես թե վաղը:

Նրան շրջապատել էին գրաշարուհիները, նայում էին նրա աչքերի մեջ, հրում էին՝ «ասա»:

— Դե, Լիզա, վորոշիւր ինքդ: Ուզում ես վաղը գնա, ուզում ես մնա, ոգնիր մինչև վերջանա շինարարութիւնը և ապա գնա:

Լիզան բոլորովին շփոթվեց և հանկարծ սթափվեց, յեթե վաղը նա այստեղից գնա, շատ բան պետք կլինի վերահառուցել, վերափոխել, հարմարեցնել, իսկ յեթե չգնա, չլինի թե նա խաբի, գնա և ամենքն ել մոռանան...

Ինչո՞ւ չես պատասխանում:

— Վնչ, ավելի լավ ե յես այստեղ կմնամ,—վերջապես պատասխանեց Լիզան:

— Անկեղծորէն ես ասում:

— Անկեղծորէն:

— Այդպես ել կզրենք: Թողեք նրան այստեղ, իսկ

շինարարութիւնն ավարտելուն պես, ազատ արձակեք: Յեվ մի քանի հարցեր ևս մյուսներին տալով, պետք դուրս յեկավ:

Լիզան կանգնած եր և վոչինչ չեր հասկանում: Նրան հրհրում էին, շնորհավորում: Լենկան գնաց նկարելու, մոռանալով, վոր աշխատանքի ժամանակ եր:

Դաստիարակչուհին սեղմեց Լիզայի ձեռքը, իսկ նա կանգնած եր և չեր կարողանում գնահատել այն բոլորը, ինչ պատահեց:

9.

Ազատութիւն: Ամբողջ գիշերը, ամբողջ հետեյալ որը Լիզան մտածում եր, վոր շատ շուտ կարող ե ազատվել: Հրահրելով յերեակայութիւնը, նա աշխատում եր պատկերացնել ապագա ազատ կյանքը. բայց ամեն բոպե աչքերի առաջ ծառանում եր իր այսորը, իսկ այդ այսորը հարազատ եր նրան, ինչպես հարազատ են արդեն և՛ շինարարութիւնը և՛ գրոհը և՛ հարվածային բրիգադները, այո՛, նրանք անհրաժեշտ են նրան այնպես, ինչպես կյանքը և հետաքրքրական են, ինչպես կյանքը:

Միայն յերեկ նա գլխագրերով շարեց վեցերորդ տեղամասի ճեղքվածքի մասին, վոր ոտորին ճամբարային վարչութիւնը կանոնավոր չի չափում գետինը և նորման 70 տոկոսով կատարողին գրում ե 100 տոկոս: Լիզան գիտեր, վոր այդ ճեղքվածքի շուրջը գորահավաքված ե ճամբարի վողջ հասարակայնութիւնը: Լիզան գիտեր այդ ասթիվ գործերն ու խոսքերը: Յեվ հիմա գնալ «Ե՛հ, չե՛ վոր յես իսկապես

վարժվել եմ և սիրել «պատիժը»: Կարծես ուրիշ կյանք չի յել յեղեկ»:

Յե՛վ յերբ մի յերկու սրից հետո պետք Լիզային կանչեց իր մոտ և հաղորդեց նրան, վոր հավաքած տեղեկութիւններէ համաձայն, նրա մարդն սպանված է ժամապահից հրացանը խլելիս, Լիզան նույնիսկ չցնցվեց և ուղղակի ասաց «լավ» ու հեռացավ:

Նա փորձեց կարեկցութիւն զգալ գեպի յերիտասարդ, կովարար, կատաղի և հարբեցող Սեմեոնը, բայց չկարողացավ: Այդ բոլորն այնքան հեռու յեր, կարծես յերազում, վոր կրկնելու հնարավորութիւն չկա:

10.

Յե՛վ անա յերկրորդ գարունն է, ջրանցքի վերջին վճռական սրերը: Ոգում էլ փչում է մոտ վախճանի հոտը — առանձնապես ջերմորեն են աշխատում ճամբարավորները, նվաճելով այն վկայականի իրավունքը, վորտեղ ասված լինի, վոր նրան ներկայացնողն իր աշխատանքի հարվածային թափերով Բալթիկ-Սպիտակծովյան ջրանցքում իրավունք է ձեռք բերել ապրելու և աշխատելու աշխատավոր ժողովրդի ընտանիքում:

Լիզան արդեն հասկանում էր այն խոսքերի իմաստը, Սպիտակծովյան ջրային ուղին — զա սոցիալիստական պետութեան իսկական հաղթանակն է, վոր այդ ուղու նշանակութիւնը յերկրի ժողովրդական տնտեսութեան համար մեծ է: Նա հասկանում էր բոլշևիկների այն հնարագետ մեխանիկան, վորն ատում էր նա իր այդտեղ գալու առաջին շաբաթները, մե-

խանիկական, վորի հանձարեղութիւնը կայանում էր նրա պարզութեան մեջ, նրանում, վոր միաժամանակ ստեղծվում էին հսկայական կարևորութեան յերկու գործ՝ ջրանցք և մարդ, — ստեղծվում էր ջրանցքը մարդու աշխատանքով, իսկ մարդը — ջրանցքի վրա թափած աշխատանքով: Յե՛վ յերբ պայթեցին ջուրը բռնող պատվարները և սկսեցին ջրով լցվել սահանքները (շյուզի), յերբ սկսեցին միանալ լճերը և լցվել նախորդ պատրաստված ջրամուկները (ոտվոյ), Լիզան գիտեր, վոր այդ գործում կա նայե՛վ իր օրինական բաժինը:

Լիզան գիտեր, վոր նրան պետք է ուղարկեն Սպիտակծովշենի հարվածայինների հետ գեպի Լենինգրադ մեկնող առաջին նավով: Նրան ուրախացնում էր այդ վոչ միայն նրա համար, վոր նա այժմ իրեն զգալու յե ազատ աշխատավոր մարդ, այլ նրա համար, վոր նա գնալու յե վոչ թե մենակ, այլ նրանցից լավագուշներէ հետ, վորոնք կառուցում էին ջրանցքը — մեկնել առաջին նավով, առաջին ջրով, այն տեղերով, վորտեղ զցված է Սպիտակծովյան սոցիալիստական ջրային ուղու տրասսը (գիծը):





« Ազգային գրադարան »



NL0318487

A white rectangular label is affixed to the bottom right corner of the book cover. It features the text « Ազգային գրադարան » at the top, a standard barcode in the middle, and the alphanumeric code NL0318487 at the bottom.

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.
Цена 25 Коп.

10001

4645

491 8M
8M1

На армянском языке

А. Афиногенов
Лиза Сорокина

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԳԱՀԵՍԵՐ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)